ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԸՆՏՐՎԵՑ

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱԼՅԱՆԸ

Հուլիսի 4-ին, երեկոյան ժամը 8-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ ընտրելու նպատակով գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի և եպիսկոպոսաց համատեղ ժողով՝ ատենապետությամբ Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի և Կ. Պոլսո հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող 53 հրավիրյալներից ժողովին ներկա էին 36 հոգի:

Փակ գաղտնի քվեարկությամբ Կաթողիկոսական Տեղապահ ընտրվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պողապալյանը:

Ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

Տ. Ներսես արքեպս. Պողապալյան - 24 ձայն
Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյան - 10 ձայն
Տ. Վիգեն եպս. Այքազյան - 1 ձայն
Ձեռնպահ - մեկ հոգի

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

5 հուլիսի 1999 թ.

Խմբագրություն կողմից - *Ի սրտե շնորհավորում ենք Ամենապատիվ Սրբազան Հորը Կաթողիկոսական Տեղապահ ընտրվելու առիթով: Քանի որ այս համարը բացառապես նվիրված է ի Տեր նորոգ հանգուցյալ Գարեգին Ա Վեհափառի խնկելի հիշատակին, Տեղապահ Սրբազանի կենսագրությանը եւ ընտրությանը, հուլիսին տեղի ունեցած Գերագույն Հոգեւոր Խորհրդի նիստերին, ինչպես նաեւ Մայր Աթոռին ու Հայոց Եկեղեցուն վերաբերող այս ամսվա նյութերին կանդրադառնանք հաջորդ համարում:*